

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2004թ. հունվար-նոյեմբերի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2004թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1672198.0 մլն. դրամ և դրա աճի տեմպը 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 110.0%՝ 2003թ. հունվար-նոյեմբերի 115.1%-ի դիմաց:

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում բազային 5 ճյուղերի աճով: Դրա հետ մեկտեղ, ՀՆԱ-ի կառուցվածքում այդ ճյուղերի տեսակարար կշիռը 2003թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ ավելացել է 0.8 տոկոսային կետով:

ՀՆԱ արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		Նպաստման չափը (տոկոսային կետով) ՀՆԱ-ի հավելածին		ՀՆԱ-ի կառուցվածքը	
	հունվար- նոյեմբեր					
	2003	2004	2003	2004	2003	2004
<i>ՀՆԱ-ն հիմնական գներով</i>	115.6	110.7	14.1	9.7	90.9	91.5
որից՝						
արդյունաբերություն	118.2	101.5	3.9	0.3	20.5	20.2
գյուղատնտեսություն	102.2	114.3	0.5	3.2	22.1	23.1
շինարարություն	153.1	113.2	6.9	2.1	16.1	15.9
տրանսպորտ և կապ	106.6	117.6	0.4	0.9	5.4	5.5
առևտուր և հանրային սնունդ	114.4	109.2	1.3	0.9	9.7	9.9
<i>Ընդամենը, բազային ճյուղեր</i>	117.6	110.1	13.0	7.4	73.8	74.6
Ընդամենը, այլ ճյուղեր	106.7	113.2	1.1	2.3	17.1	16.9
Ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	110.3	103.1	1.0	0.3	9.1	8.5
<i>ՀՆԱ-ն շուկայական գներով</i>	115.1	110.0	15.1	10.0	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(ընդամենի նկատմամբ, %)

	Հունվար- նոյեմբեր	
	2003թ.	2004թ.
<i>Համախառն ներքին արդյունք</i>	100	100
ապրանքներ	58.9	59.4
ծառայություններ	32.0	32.1
ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	9.1	8.5